

ԿԿՈՒ
ԲԱՅԱՌԻԿ

2024



Badgar



ԿԿՈՒ



ԲԱՅԱՌԻԿ

ՁՄՐԱՆ ԵՂԱՆԱԿԸ



Ժամանակին փոքրիկ քոյր ու եղբայր իրենց ծնողքին հետ կ'ապրեին լեռնային վայրի մը մէջ:

Անոնք ձմրան մեծ հաճոյքով կը սպասէին, որպէսզի ձիւներուն մէջ խաղային:

Դեկտեմբեր էր, Նոր Տարին կը մօտենար: Փոքրիկներուն հայրը իրենց օգնութեամբ հսկայ ձիւնեմարդ մը պատրաստեց անոնց համար:

Ձիւնեմարդը շա՛տ մեծ էր: Անոր աչքերը կոճակներէ շինուած էին: Իսկ քիթը փայտով պատրաստուած էր:





Հայրը ձիւնեմարդուն գլխուն դրած էր իր հին գլխարկը: Իսկ անոր վիզին բուրդէ վզնոց մը:

Փոքրիկները ամէն օր կը խաղային իրենց նոր ընկերոջ՝ ձիւնեմարդուն հետ: Իրենց այնպէս կը թուէր, թէ ան կը ժպտէր ու իրենց պէս երջանիկ էր:

Սակայն օրերն ու ամիսները արագ ընթացան: Որոշ ժամանակ մը ետք, եղանակը դարձեալ փոխուեցաւ եւ հասաւ գարունը, որ իր հետ բերաւ արեւուն ջերմութիւնը:

Արեւը փայլեցաւ երկնքին մէջ եւ մեր բարի ձիւնեմարդը հալեցաւ:

Փոքրիկները շատ տխրեցան իսկ հայրիկը ըսաւ.

- Բնութիւնը անընդհատ իր տեսքը կը փոխէ: Մենք պէտք է սորվինք վայելել անոր բոլոր գեղեցիկ եղանակները: Ձմեռը կրկին կու գայ եւ մենք դարձեալ ձիւնեմարդ կը շինենք:

Փոքրիկները համոզուեցան հայրիկին խօսքերով եւ որոշեցին հաւասարապէս վայելել գարնան, ամրան, աշնան եւ ձմրան եղանակները:

«Բնութիւնը անընդհատ իր տեսքը կը փոխէ: Մենք պէտք է սորվինք վայելել անոր բոլոր գեղեցիկ եղանակները»:





ԿԿՈՒ

ԲԱՅԱՌԻԿ



ԿԱՂԱՆԴ ՊԱՊՈՒԿՆ ՈՒ ՉԱՐ ՏՂԱՆ

Ժամանակին, ըսենք այսօր ալ, կ'ապրի բարի ծերունի մը: Անոր մազերը ձիւնի նման են, մօրուքը՝ նոյնպէս: Հագուստն ալ ճերմակ է եւ թիկունքին նետած է իր պարկը: Ան աշխարհի ամենալաւ ծերունին է: Ան բոլոր երեխաներուն միրգ ու քաղցրեղէն կը բաժնէ եւ Նոր Տարուան երգեր կը սորվեցնէ:

Օր մը այդ ծերունին փորձանքի կը հանդիպի: Լեռներուն եւ ձորերուն մէջ պտտելէն յոգնած կ'որոշէ քաղաք երթալ եւ դէմը ելած առաջին անուշաձաճառի խանութը մտնել՝ պաղպաղակ ուտելու եւ հանգստանալու համար: Ծիշոյ այդպէս ալ կ'ընէ. կը մտնէ շատ մաքուր անուշաձաճառի խանութ մը, քաղաքավարութեամբ կը բարեւ վաճառողին, եւ պաղպաղակ կը խնդրէ: Այդ ժամանակ ծերուկին կը մօտենան երկու չար տղաք եւ կը փորձեն զայն վախցնել.

- Դուք ո՞վ եք, ձեր ինքնութեան թո՛ւղթը:

- Ի՞նչ ինքնութեան թուղթ,- ժպիտով կը պատասխանէ ծերունին,- ես Կաղանդ Պապուկն եմ:

- Ատիկա մեր գիտնալիքը չէ,- կ'ըսեն անոնք եւ Կաղանդ Պապուկին ձեռքերէն բռնած կը տանին իրենց նման ուրիշ չար տղոց քով:





- Դուն ո՞վ ես,- կը հարցնէ անոնց մէջէն ամենէն չարը:
- Կաղանդ Պապան եմ:
- Յիմա ո՞ր ամսուն մէջ ենք:
- Դեկտեմբերին մէջ:
- Ամսուն քանին է:
- Ուրքը:
- Իսկ քու գալուստիդ ժամանակը ե՞րբ է:
- Ամսուան վերջը:
- Ինչո՞ւ կանուխ եկեր ես:
- Լեռներէն իջայ, քիչ մը զբաղեցայ, յոգնեցայ, ըսի մտնեմ խանութ եւ պաղպաղակ ուտեմ:

Չար տղան ծերունիին խօսքերը առանց լման լսելու կը պոռայ.

- Պարկիդ մէջ ի՞նչ կայ:
 - Ընկոյզ, չամիչ, նկարներ...
 - Շո՛ւտ, բոլորը հանէ՛, այլապէս վառարանը կը վառեմ, կը տաքնաս եւ կը հալիս:
- Կաղանդ Պապուկը շատ կը վախնայ հալելէն, ուստի պարկին մէջէն ամէն ինչ կը հանէ, կու տայ չար տղուն, իսկ ինք կը պզտիկնայ, կը պզտիկնայ եւ վը՛գ պատուհանէն դուրս թռչելով, դէպի լեռներ կը վերադառնայ: Չար տղան կը սկսի արագ-արագ ուտել Կաղանդ Պապուկին բերած չամիչն ու ընկոյզը:

Դուք մի՛ ըսէք, այդ ընկոյզն ու չամիչը կախարդուած են եղեր: Չար տղան զանոնք կ'ուտէ եւ քիթը անմիջապէս կը սկսի երկարիլ:

Չար տղան լալով կ'երթայ բժիշկին քով, որ զինք բուժէ: Բժիշկը, որպէս պատիժ, անոր քիթը կը կտրէ: Զիթը կտրուելուն պէս չար տղան կը խելօքնայ եւ այլեւս երբեք անմիտ կատակներ չ'ըներ: Իսկ եթէ Կաղանդ Պապան սխալմամբ ժամանակէն քիչ մը առաջ գայ, ինքն ու իր ընկերները զայն յարգանքով ու պատիւով կը դիմաւորեն, կը տանին հոյակապ դղեակ մը, որուն անունը սառնատուն է, եւ թոյլ կու տան, որ սքանչելի ցուրտին մէջ ան հանգիստ ապրի մինչեւ Նոր Տարուան գալուստը...:





ԿԿՈՒ

ՀԱՒԱՏՔԻՆ ՈՒԺԸ

ԲԱՑԱՌԻԿ



Ամերիկայի նահանգներեն մեկուն մեջ, ուր տարուան աւարտին բոլոր փողոցները կը զարդարուէին, Սեւան անունով աղջիկ մը կ'ապրէր այնտեղ իր ընտանիքին հետ: Ամէն տարի այդ նահանգին բնակիչները անհամբեր կը սպասէին Նոր Տարուան: Մեծ շուքով տօնուող տօն մը, որ կը միաւորէր Սուրբ Ծնունդն ու Ամանորը:

Սեւան միշտ երագած էր հանդիպիլ Կաղանդ Պապուկին, այն երջանիկ ծերունիին, որ ամէն տարի ծիծաղ եւ նուէրներ կը բերէր աշխարհի բոլոր փոքրիկներուն:

Հեքիաթը կ'ըսէր, որ Կաղանդ Պապուկին արիեստանոցը պահուած էր կախարդուած անտառի մը խորքը, որ հասանելի էր միայն անոնց, որոնք մաքուր սրտեր եւ անսասան հաւատք ունէին: Իսկ Կաղանդ Պապուկին գոյութեան մասին իր ունեցած հաւատքը ապացուցելու համար Սեւան որոշեց





անապայման անոր արհեստանոցը գտնել: Մեծ մայրիկէն յիշատակ մնացած տօնածառի զարդը, որ միշտ լաւ բախտ կը բերէր իրեն, գրպանը դրած ճամբայ ինկաւ դէպի ձիւնածածկ անտառ՝ արհեստանոցը գտնելու:

Ան ճամբորդած ատեն հանդիպեցաւ կախարդական արարածներու, շատախօս ձիւնի փաթիլներու, չարաճճի խոզուկներու եւ նոյնիսկ պառաւ բուի մը, որ զինք զգուշացուց ճամբուն անապահով եւ վտանգաւոր ըլլալէն: Իւրաքանչիւր հանդիպումէ ետք, Սեւան փոխանակ յուսահատելու, աւելի հաւատքով կը լեցուէր Նոր Տարուան ու Սուրբ Ծննդեան խորհուրդին հանդէպ եւ ինքզինք աւելի զօրաւոր կը զգար:

Վերջապէս, չափազանց դժուար փորձութիւններ ապրելէ ետք, յանկարծ հեռունէն ոսկեայ լոյսով, հազիւ երեւցող տնակ մը տեսաւ: Ուրեմն ճիշդ հոն կը գտնուէր Կաղանդ Պապուկին մեծ արհեստանոցը՝ վառող-մարող շողշողուն





լոյսերով ու անհամար խաղալիքներով, նաեւ անկասկա՛ծ՝ Կաղանդ Պապուկին աշխուժ օգնականները:

Սեւան ուրախութենէն ապշահար արհեստանոց մտաւ: Չինք դիմաւորեց մեր բոլորին շատ սիրելի Կաղանդ Պապուկը: Սեւանին ծիծաղը արձանգանգեց ամէն տեղ: Կաղանդ Պապուկը արդէն ճանչցաւ անոր սրտին մաքրութիւնը: Ապա գինք ներս հրաւիրեց՝ Նոր Տարուան պատրաստուելու:

Սեւան օրեր շարունակ Կաղանդ Պապուկին օգնականներուն հետ աշխատեցաւ՝ խաղալիքներ կազմելով ու նուէրներ փաթեթելով: Ան հիացաւ արհեստանոցի անթիւ խաղալիքներով եւ նուէրներով, որոնք իր մէջ առատաձեռնութեան ու անփոխադարձ ծառայութեան ոգին արթնցուցին:

Նոր Տարուան նախօրեակին, Կաղանդ Պապան շնորհակալութիւն յայտնեց Սեւանին իր նուիրական աշխատանքին համար եւ անոր բանալի մը նուիրեց: *«Այս բանալին կը բանայ հաւատքին ուժեղ դուռը»,-*





ըսաւ ան: «Միշտ քեզ հետ կրէ՛ գայն եւ մտածե՛ այն գորաւոր հաւատքին մասին, որուն պատճառով այստեղ կը գտնուիս»:

Սեւան ուրախ-գուարթ շնորհակալութիւն յայտնեց Կաղանդ Պապուկին եւ հրաժեշտ տուաւ արհեստանոցին: Ան երբ վերադարձաւ իրենց նահանգը, տեսաւ որ Սուրբ Ծննդեան եւ Նոր Տարուան իսկական իմաստը կը գտնուէր ոչ միայն խաղալիքներու արհեստանոցին մէջ, այլեւ իւրաքանչիւր մարդու սրտին մէջ:

Վերջապէս ան տուն վերադառնալով իր անհաւատալի պտոյտին մասին պատմեց ընտանիքին ու ընկերներուն: Իսկ սիրելիներն ու բարեկամները իր հեքիաթէն ոգեշնչուած հասկցան, թէ որքան կարելոր է հաւատքի ուժին վստահիլ եւ միշտ յոյսով լեցուիլ: Անոնք հաւաքուեցան սկսելու Նոր Տարին: Այդ պահուն, երկնքին մէջ յայտնուեցան բարութեան ու սիրոյ ալիքները:

Այնուհետեւ, այդ նահանգին մէջ Նոր Տարուան օրը դարձաւ միասնութեան, խաղաղութեան եւ ծառայութեան օր:

Հաւատացէ՛ք փոքրիկներ, որ եթէ բարի գործեր կատարէք առանց փոխարէնը ակնկալելու, կրնաք ստեղծել աշխարհ մը, ուր տօներուն կախարդանքը կը շարունակուի ոչ միայն յատուկ առիթներու, այլեւ մեր առօրեայ կեանքին մէջ:





ԿԿՈՒ

ՍԱՅԱԿԻՆ ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ՆՈՒԵՐԸ

ԲԱՅԱՌԻԿ



Նոր Տարուան նախօրեակին, բոլորը ուրախ եւ ոգեւորուած էին: Անոնցմէ մէկը փոքրիկ Սահակն էր: Հիմնական պատճառն ալ այն էր, որ ան իր հօրը հետ շուկայ պիտի երթար՝ իր սիրած յատուկ խաղալիքները գնելու: Շուկան եռուզեռ կար: Բոլոր խանութները զարդարուած էին տարբեր գոյներով ու հրապուրիչ լոյսերով:

Երբ Սահակ սկսաւ փողոցին մէջ շրջիլ եւ զարմանքով դիտել իր չորս դին, յանկարծ իր աչքին երեւցաւ խանութ մը, ուր մեծ թիւով թռչուններ կային վանդակի մը մէջ: Անոնք անընդհատ կտուցով կը հարուածէին վանդակը՝ փախչելու ապարդիւն փորձեր ընելով եւ երբեմն իրենց-զիրենք վիրաւորելով:

Սահակ խղճաց թռչուններուն: Ան այս տեսարանին չդիմանալով խանութ մտաւ:

- Ինչո՞ւ բանտարկած էք այս անմեղ թռչունները,- հարցուց տխրած եւ զայրացած:





ԿԿՈՒ

2024



Սահակին համար անընդունելի երեւոյթ էր տեսնել որեւէ մէկուն ազատութիւնը՝ խլուած կամ կաշկանդուած:

- Ես ալ ուրախ չեմ գիրենք բանտարկելով,- պատասխանեց խանութպանը,- բայց այլ տարբերակ չունիմ: Այս թռչունները ծախելով, ես գումար կը շահիմ, որպէսզի անով իմ ընտանիքը կերակրեմ:

Այս լսելով Սահակ միտք մը յղացաւ: Ան ուզեց գնել վանդակին մէջ գտնուող բոլոր թռչունները: Ան նայեցաւ հօրը, մինչ գրպանին մէջ դրամ կը փնտռեր:

- Ինչպէ՞ս պիտի գնես բոլոր սիրած խաղալիքներդ, որոնց համար շուկայ իջած էիր, Սահա՛կ,- հարցուց հայրը:

Սահակ պահ մը շփոթեցաւ, բայց որոշեց, որ թռչուններուն ազատ արձակումը աւելի կարեւոր էր, քան իր խաղալիքները: Ան իր հօր ձեռքը բռնեց ու ըսաւ.

- Չայրի՛կ, ես կրնամ նոյնիսկ առանց խաղալիքներու լաւ ու հաճելի ժամանակ անցընել ընկերներուս հետ Նոր Տարուան ընթացքին: Նոյնպէս ալ այս թռչունները՝ աւելի լաւ ժամանակ կ'անցընեն բաց երկնքին տակ:

Խանութպանը շատ ուրախացաւ եւ վանդակը յանձնեց Սահակին, որ դուռը բանալով թռչուններուն ազատութիւն տուաւ: Սահակ ուրախութենէն սկսաւ ծափահարել:

- Չայրի՛կ, հիմա անոնք կրնան Նոր Տարին նշել իրենց ընտանիքներուն եւ ընկերներուն հետ: Շատ շնորհակալ եմ քեզմէ: Աւելի մեծ ամանորեան նուէր չէի կրնար ստանալ,- պատասխանեց Սահակ հանգիստ խղճով:





ԿԿՈՒ

ԲԱՅԱՌԻԿ



ԱՄԱՆՈՐԵԱՆ ԱԻԱՆԴՈՅԹՆԵՐ ՏԱՐԲԵՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՄԵՋ

1. **Ճափոնի** մեջ Ամանորը կը նշեն յատուկ կերակուրով մը, որ կը կոչուի «osechi ryori», որուն բաղադրութեան մեջ, ենթադրաբար, կան նիւթեր որոնք յաջողութիւն կը բերեն:



2. **Սպանիոյ** մեջ աւանդութիւն է Ամանորի գիշեր ժամը 12-ին խաղող ուտելը ժամացոյցի իւրաքանչիւր զանգին հետ, որպէսզի գալիք տարին առողջութեամբ լի ըլլայ:



3. **Սքոթլանտայի** մեջ Ամանորը կը տօնեն «Hogmanay» կոչուող փառատօնով մը, որ կը պարունակէ շարք մը աւանդոյթներ, ինչպէս՝ «առաջին ոտքը»: Ըստ աւանդութեան առաջին անձը, որ կէս գիշերէն ետք տուն կը մտնէ, իր հետ նուէրներ կամ հիւրասիրութիւն կը բերէ:

4. **Յունաստանի** մեջ աւանդութիւն է թխել յատուկ հաց մը, որ կը կոչուի «vasilopita»: Անկա կը պարունակէ պահուած մետաղադրամ կամ տօնածառի զարդ: Ան որ կը գտնէ մետաղադրամը իր հացին մեջ, եկող տարուան ամենէն բախտաւորը կը դառնայ:





5. **Ֆիլիփինի** մեջ կը հաւատան, թէ Ամանորի գիշեր արտօսուած է ուժգին հարուածել կաթսաներուն՝ չար ոգիները քշելու եւ բարութիւնը դիմաւորելու համար:



6. **Տենիմարքի** մեջ աւանդութիւն է ապակի պնակներ կոտրել ընկերներուն եւ հարազատներուն տուններուն դռներուն առջեւ, ի նշան սիրոյ եւ յաջողութեան:



7. **Ռուսիոյ** Ամանորեան աւանդութիւններէն է թուղթի մը վրայ ցանկութիւն մը կամ փափաք մը գրել, զայն այրել, իսկ յետոյ Նոր Տարուան գիշեր անոր մոխիրը խմիչքին հետ խմել:

8. **Պրագիլի** մեջ սովորութիւն դարձած է Ամանորի գիշեր ճերմակ հագուստ հագուիլ, իբրեւ խ ա դ ա դ ու թ ե ա ն եւ յաջողութեան խորհրդանիշ:

9. **ԱՄՆ-ի** մեջ սովորութիւն դարձած է Ամանորի գիշեր դիտել Թայմզ Սքուէրի ինկոդ գնդակը: Ասիկա Նիւ Եորք ն ա հ ա ն գ ի աւանդութիւններէն է, որ պահուած է 1907 թուականէն ի վեր: (Թայմզ Սքուէրի ինկոդ գնդակը ժամանակի գնդակ է, որ ա մ ա ն ո թ ե ա ն տօնակատարութիւններուն մէկ անբաժան մասն է: Ասիկա գնդակի անկում կը կոչուի, որովհետեւ գնդակը յատուկ նախագծուած դրօշակածողով կ'իջնէ, ժամը 23:59:00-էն սկսեալ:





ԿԿՈՒ

ԽՈՅՎԱԳԻՐ

ԲԱՅԱՌԻԿ



ՁԻՆԵՄԱՐԴԷ ՄԱՐԾՄԵԼՈՆԵՐ



© Elizabeth LaBau

Բաղադրութիւն

- Խոշոր մարշմելօսեր
- Ճերմակ տուրմ (հալեցնելու համար)
- Սեւ (սրճագոյն) տուրմի մանրուք
- Նարնջագոյն պզտիկ տուրմէ շաքարներ
- Ձօղիկներ

Պատրաստութիւն

1. Ճերմակ տուրմը հալեցնել:
2. Ձօղիկները դնել իւրաքանչիւր մարշմելօյի կեդրոնը:
3. Մարշմելօները հալած ճերմակ տուրմին մէջ թաթխել՝ զանոնք ամբողջութեամբ ծածկելով:
4. Մարշմելօները պնակի մը մէջ դնել եւ քանի մը վայրկեան սպասել, որպէսզի սառնին:
5. Երբ բաւարար չափով սառնին, սրճագոյն կամ սեւ տուրմին մանրուքներով ձեւաւորել ձիւնեմարդուն աչքերն ու բերանը:
6. Իսկ քիթը ստեղծելու համար օգտագործել նարնջագոյն պզտիկ տուրմէ շաքարները:
7. Եւ վերջապէս ձիւնեմարդէ մարշմելօները հրամցնել ու համեղ-համեղ վայելել զանոնք:





ԿԿՈՒ

2024



ԽԱՂԵՐ

ԵՐԳԵՐՈՒ ԽԱՂԸ

Նկարները բառերու վերածելով գիտցի՛ր երգը:

- 1
- 2
- 3
- 4
- 5
- 6
- 7

ոչխոճմզի ռոտոպ-րոտոպ տպր
 ստղտրղ ժղզստրտրվն իսսզստի ոս իսսզսնջ ‘ստոխ շ սղոնտի
 անտգտղոտ շ դոմ չղվ ‘ո,գՏ
 ժ,ճնչղզ ովիսի մջեղոն ուսեղն վստղտրղ
 մշվն ժս,սո ‘մշվն տ,տ
 մ,ղղիտեղոն ‘մ,ղղիտեղոՇ
 շ Շու ոտտոտ սղոնտի
:մղղղոտլոտտոՆ





ԿԿՈՒ

ԲԱՅԱՌԻԿ



Ի՞ՆՉ ՆՈՒԵՐ ՊԻՏԻ ՍՏԱՆԱՍ ԱՅՍ ՏԱՐԻ ԿԱՂԱՆԴ ՊԱՊՈՒԿԵՆ

Միացո՛ւր տարեդարձիդ ամիսը յաջորդ էջին վրայ գտնուող անունիդ առաջին տառին:

Տարեդարձիդ ամիսը՝

Յունուար: Տոպրակ մը

Փետրուար: Սենեակ մը

Մարտ: Տուփ մը

Ապրիլ: Փոքրիկ

Մայիս: Պարկ մը

Յունիս: Գաւաթ մը

Յուլիս: Ծովու կաթիլներուն չափ

Օգոստոս: Շա՛տ խոշոր

Սեպտեմբեր: Խոշոր ինքնաշարժի մը մէջ լեցուած

Հոկտեմբեր: Խոշոր տան մը մէջ լեցուած

Նոյեմբեր: Կողով մը

Դեկտեմբեր: Խոշոր խանութի մը մէջ լեցուած





ԿԿՈՒ

2024



Անունիդ առաջին տառը

Ա: Ոսկի
 Բ: Վարդեր
 Գ: Կատուններ
 Դ: Արծաթ
 Ե: Գիրքեր
 Ձ: Բջիջային հեռաձայններ
 Է: Հագուելիք
 Ը: Ուտելիք
 Թ: Շնիկներ
 Ճ: Փուչիկներ
 Ի: Դրամ

Լ: Անուշեղեններ
 Խ: Տարեդարձի կարկանդակ
 Ծ: Խնձորներ
 Կ: Գանձ
 Հ: Կծու պղպեղ
 Ձ: Շաքարներ
 Դ: Ադամանդ
 Ճ: Համակարգիչ
 Մ: Երջանկություն
 Յ: Պուպրիկներ
 Ն: Տուրք
 Ը: Շագանակ

Ո: Ոգևի
 Չ: Կաղանդի խաղալիքներ
 Պ: Չամիչ
 Ջ: Ընկոյզ
 Տ: Բարձր տրամադրություն
 Ը: Ձիւն
 Ֆ: Յոյս
 Է: Լոյս
 Փ: Ժամացոյց
 Բ: Ուրախություն
 Օ: Բիցցա
 Ֆ: Անուշահոտ





ԿԿՈՒ

ԲԱՑԱՌԻԿ



ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԽԱՂԵՐ՝ ՈՒՐԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՆՑԸՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ամանորը բարձր տրամադրուժին, խինդ ու ծիծաղ ապահովող հեքիաթային տօն է: Հետաքրքրական խաղերը այս տօնը կը դարձնեն անելի յիշատակելի ու գեղեցիկ: Ուրեմն եկե՛ք միասին խաղանք ու գուլարճանանք:

Առաջին խաղ: «ՓԱԹԻԼԸ ԲՈՆԵ՛»

Նախապես գեղեցիկ ու գունաւոր թուղթ փաթիլներ կը պատրաստենք: Այդ փաթիլները բոլորը միասին օղը կը նետենք, իսկ մասնակիցները պետք է ջանաս զանոնք բռնել: Այն անձը, որ ամենէն շատ փաթիլներ կը հաւաքե՛ անիկա կը յաղթե:





Երկրորդ խաղ: «ՏՕՆԱԾԱՌԵՐ»

Փոքրիկները իրարու ձեռք բռնած շրջանակ կը կազմեն (իւրաքանչիւրին ետեւ՝ իր աթոռը): Խաղը վարողը կը սկսի պատմել, որ տօնածառը կ'ըլլան բարձր եւ կարճ, լայն եւ նեղ: Ան երբ կ'ըսէ «բարձր տօնածառ», փոքրիկները պետք է իրենց ձեռքերը վեր բարձրացնեն, երբ կ'ըսէ «կարճ տօնածառ», փոքրիկները կը նստին, «լայն տօնածառ» ըսելու ատեն պետք է իրարու ձեռքերը բռնած մէկ քայլ ետ երթան՝ լայնցնելով շրջանակը, իսկ «նեղ տօնածառ»-ի պարագային, հակառակը՝ մէկ քայլ առջեւ: Երբ փոքրիկները խաղի կանոնները լաւապէս իւրացնեն, կարելի կ'ըլլայ գանոնք շփոթեցնել:

Երրորդ խաղ: «ԽՆԴԱ՛- ԽՆԴԱ՛...»

Կաղանդ Պապան շատ կը սիրէ փոքրիկներուն խնդուքը: Այս խաղը կը խաղանք փուչիկ մը վեր նետելով: Երեխաները պետք է խնդան այնքան ատեն, որ փուչիկը օդին մէջ է: Այն վայրկեանին որ փուչիկը գետին իյնայ, խնդուքը պետք է դադրի: Խաղէն դուրս կը մնայ այն մասնակիցը, որ չի կրնար դադրեցնել խնդուքը:





Չորրորդ խաղ: «ՁԻՒՆԵ ԳՆԴԱԿՆԵՐԸ ԲՈՒՆԷ՛»

Փոքրիկները կը բաժնուին զոյգերու: Անոնցմէ մեկուն ձեռքը կողով մը կամ դոյլ մը կը տրուի, իսկ միւսին՝ պարկի մէջ լեցուած ձիւնէ գնդակներ (ճմրթկուած թուղթերով պատրաստուած): Իւրաքանչիւր փոքրիկ իր զոյգին կը նետէ ձիւնէ գնդակը, իսկ ընկերը պետք է փորձէ գայն իր կողովով բռնել: Եթէ ձիւնէ գնդակը կողովին քով իյնայ, ուրեմն ան այլեւս խաղին մէջ չէ: Կը յաղթէ այն զոյգը, որ ամէլի շատ գնդակներ կը հաւաքէ (որոշ ժամանակ տրամադրելով):

Յինգերորդ խաղ: «ԳՏԻ՛Ր ՁՄՐԱՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԲԱՌԵՐԸ»

Մասնակիցներուն համար կ'արտասանենք խառն բառեր: Անոնք պետք է ծափ տան, երբ լսեն յատուկ ձմրան վերաբերող բառեր (օրինակ ձիւն, Դեկտեմբեր, տօնածառ, ծով, սայլակ, Ձմեռ, կաղանդ պապա, աշնանային տերեւներ, ձիւնեմարդ, ձուկ, սառոյց, փաթիլ, մկրատ եւ այլն): Այն անձը, որ կը շփոթի ու զուր տեղը ծափ կու տայ, խաղէն դուրս կը մնայ:





Վեցերորդ խաղ: «ՁԻՆԵՄԱՐԴ ԳԾԷ՛»

Երկու խումբերու կը բաժնուինք եւ իրարու ետեւ շարք մը կը կազմենք: Շարքին վերջաւորութեան կեցող մասնակիցը իր առջեւ գտնուողին կռնակին տեղադրուած թուղթին վրայ կը գծէ ձիւնեմարդ մը (միւս մասնակիցները տեղեակ չեն ըլլար թէ ինչ պիտի գծուի), վերջնաբերն ալ նոյն ձեւով իր առջեւ գտնուող մասնակիցին կռնակին կը գծէ այն պատկերը որ կը կարծէ, թէ գծուեցաւ իր կռնակին վրայ ու այսպիսով յաջորդաբար, մինչեւ որ կարգը հասնի շարքին առաջինը մասնակիցին: Կը յաղթէ այն խումբը, որ ամենէն առաջ կը գուշակէ գծագրութիւնը: (Կարելի է ձիւնեմարդուն փոխարէն գծել տօնածառ, եղնիկ, ձիւնե փաթիլ, եւ այլն...):





ԿԿՈՒ

ՁԵՌԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԲԱՅԱՌԻԿ



Եկե՛ք միասին պատրաստենք փայլուն հրեշտակներ, որոնցմով կրկանք զարդարել մեր տոնածառն ու նոյնիսկ ամբողջ սենեակը:



1.- Գործածենք փայլուն մետաղե թել (եթե ունինք):
Մետաղե թելը մեջտեղեն երկուքի կիսենք:



2.- Ապահովենք խոշոր հլուն գնդակ մը, որուն մեջեն թելը անցընենք եւ անոր վերի բաժինը շրջանակ մը շինենք ու ամրացնենք հլունին նոյն անցքին մեջ:



3.- Հագուստը ձեւելու համար կտրենք *քրտեշ* տեսակի թուղթ մը՝ 30 սմ. երկարութեամբ եւ 6 սմ. լայնութեամբ: Ետքը ծալքեր շինենք անոր վրայ:



4.- Թուղթը թելին շուրջ հաւաքենք (հրեշտակին գլխուն տակ) ու այդպէս բռնենք...





5.- Բարակ թելով մը թուղթը գլխուն շուրջ փաթե՛նք եւ ամրացնենք զայն՝ քանի մը անգամ դարձնելով:



6.- Իսկ թելերուն համար կտրենք երկու կտոր փակցնելիք թուղթ եւ թաթխենք զանիկա փայլքերուն մէջ: Այնուհետեւ ծայրերը կտրենք պատկերին մէջ ցոյց տրուած ձեւով:



7.- Թելերուն փայլուն կողմը դեպի ներս դնենք: Իւրաքանչիւրին անկիւնները ծալլենք սրածայր ձեւ ստանալու համար:



8.- Սուր ծայրերը հրեշտակին կռնակին միացնենք:




9.- Հագուստին տակէն ելած թելին ծայրը ոլորենք: Իսկ գլխուն վրայ գտնուած շրջանակէն բարակ թել մը անցընենք՝ հրեշտակը մեր նախասիրած տեղէն կախելու համար:





Օգնե՛ Կաղանդ Պապուկին՝ ծիսելոյգէն իջնելու եւ տօնածառին հասնելու:



Կրնա՞ս երկու պատկերներուն միջեւ տասը տարբերութիւններ գտնել:





Կաղանդ Պապան իր առարկաները կորսնցուցած է: Կրև՛ս օգնել գտնելու գանձը:



Աջ կողմի սիւնակին մէջ կը գտնուի ամանորեան առարկաներու գիներ: Վարի պատկերներուն տակ իւրաքանչիւրին գինը արձանագրելով հաշիւները կատարէ՛:

Am Weihnachtsmarkt

	58 €
	4 €
	22 €
	3 €
	7 €
	42 €
	6 €

	_____ + _____ + _____ + _____ = _____ €
	_____ + _____ + _____ = _____ €
	_____ + _____ + _____ + _____ = _____ €
	_____ + _____ + _____ + _____ = _____ €
	_____ + _____ + _____ = _____ €
	_____ + _____ + _____ + _____ = _____ €

© JH



ԿԿՈՒ



ԲԱՅԱՌԻԿ

ՁԱԳՈՒԿՆԵՐՈՒՄ ՆԱՄԱԿՆԵՐԸ ԿԱՂԱՆԴ ՊԱՊՈՒԿԻՆ

Կաղանդ Պապա,
 Ամեն տարի կու գաս, որ ուրախանանք:
 Առանց քեզի կաղանդը հաճելի չէ,
 Նոյնիսկ երբ հիւանդ ըլլաս նորէն կու գաս,
 Որպէսզի չնեղուինք: Շնորհակալ ենք քեզմէ:
 Կը խնդրեմ, որ այս տարի ուրախ եւ խաղաղ տարի մը ըլլայ բոլորին համար:
 Մայլա Նաճարեան
 2. կարգ
 Ազգ. Միացեալ Նախակրթարան

Ես Վիքթորիա Չոչանեանն եմ: 11 տարեկան եմ: Կը ցանկամ, որ այս տարի
 ըլլայ խաղաղութեան, սիրոյ, միութեան, համերաշխութեան,
 երկայնամտութեան տարի, որպէսզի չատենք զիրար եւ միշտ խաղաղ ու սիրով
 ապրինք իրարու հետ:

Վիքթորիա Չոչանեան
 2. կարգ
 Ազգ. Միացեալ Նախակրթարան





Սիրելի՛ Կաղանդ Պապա,
Վերջապես հասաւ Դեկտեմբեր ամիսը:
Արդէն սկսած ենք զարդարանքի
աշխատանքին եւ անհամբեր կը սպասենք
այցելութեանդ, որպէսզի նուերներով եւ
անակնկալներով ուրախացնես մեզ:

Ես Աննա Մարիա Աւագեանն եմ: Ազգ.
Միացեալ Նախակրթարանի Ե. կարգի
աշակերտուի եմ: Ես քեզ շատ կը սիրեմ: Այս
տարի քեզմէ կը խնդրեմ, որ աշխարհին
խաղաղութիւն եւ երջանկութիւն բերես:

Ուրախ եւ առողջ տարիներ կը մաղթեմ
բոլորին:

Կը շնորհաւորեմ նաեւ սիրելի
ուսուցչուհիներուս եւ դասընկերներուս Նոր
Տարին եւ Ս. Ծնունդը:

Սիրով՝
Աննա Մարիա Աւագեան
Ե. կարգ
Ազգ. Միացեալ Նախակրթարան

Տարուան ամենէն հաճելի ամիսն է
Դեկտեմբերը, որովհետեւ մեծերն ու փոքրերը
մեծ հաճոյքով կը սպասեն Կաղանդ
Պապուկին, որուն տարազը, դիմակն ու
կնակին նուերներուն մեծ տոպրակը
ուրախութիւն կը պատճառէ բոլորին:
Վստահ եմ, որ հաճելի ժամեր պիտի
անցընենք քեզի հետ, Կաղանդ Պապա:

Տօնական օրերուն առիթով հայ
ժողովուրդին կը մաղթեմ նախ՝ առողջութիւն
եւ երջանկի տարիներ, իսկ ինձի եւ բոլոր
ընկեր-ընկերուհիներուս՝ յաջողութիւն:

Սիրով՝
Սալբի Գալայճեան
2. կարգ
Ազգ. Միացեալ Նախակրթարան

Սիրելի՛ Կաղանդ Պապա,
Ես շատ ուրախ եմ, որ այս տարի ալ պիտի այցելես, եւ ուրախացնես մեզ, գեղեցիկ
նուերներովդ: Գիտեմ, որ շատ կը յոգնիս մեզի համար: Ճատ շնորհակալ եմ քեզմէ: Փափաքս է,
որ այս տարուան նուերս ըլլայ խաղաղութիւն իմ երկրիս ու հայրենիքիս, ինչպէս նաեւ բոլորին
յաջողութիւն, որպէսզի ամեն մարդ ուրախ տարի մը դիմաւորէ, բայց աւելի կ' ուրախանամ,
եթէ մեր Արցախն ու Արարատը ազատագրենք:

Քեզ շատ սիրող՝
Ալիք Պաղտոյեան
2. կարգ
Ազգ. Միացեալ Նախակրթարան





ԿԿՈՒ

ԲԱՅԱՌԻԿ



Սիրելի՛ Կաղանդ Պապա,
Ես Հալեպի Ազգ. Միացեալ Նախակրթարանի 6-րդ դասարանի Սթիւ
Կաղեանն եմ:

Ձերմ ողջոյններով եւ կարօտով կը գրեմ այս նամակը: Մէկ տարի ալ անցաւ:
Վերջին քանի մը տարիներուն ընթացքին որեւէ պահանջք ունենալու
տրամադրութիւն չեմ ունեցած, ո՛չ խաղալիքի, ո՛չ հագուելիքի, ո՛չ ալ համ ու
հոտով ուտելիքներու: Իմ միակ փափաքս է ապրիլ խաղաղ կեանք մը: Թող
խաղաղութիւն տիրէ համայն աշխարհին, զենքերը անհետանան,
պատերազմները դադրին, բնութեան աղէտները վերանան, արեւը միշտ շողայ,
աղանին կապոյտ երկինքին մէջ թելածի: Իմ մեծ փափաքս է տեսնել ճերմակ
աղանին՝ իր կտուցին շալկած ձիթենիի ճիւղը: Խաղաղութիւնը բոլորին համար
երազանք դարձաւ: Յոյսով եմ, որ անկա շուտով կ'իրականանայ:

Սիրով՝
Սթիւ Կաղեան
2. կարգ

Ազգ. Միացեալ Նախակրթարան





ԿԿՈՒ

2024



Սիրելի՛ Կաղանդ Պապա,
Կը խնդրեմ, որ գալիք Նոր Տարին խաղաղութեան տարի մը ըլլայ, որպէսզի կարենանք շատ աւելի ուրախ մանկութիւն մը ունենալ:

Փափաքս է, որ մանր «լեկո»-ներ բերես, որպէսզի ընկերներուս հետ քաղաքներ եւ պալատներ շինենք: Ես 11 տարեկան եմ: Ազգ. Միացեալ Նախակրթարան կը յաճախեմ: Իմ շա՛տ սիրելի Կաղանդ Պապա, կը խնդրեմ քեզմէ նաեւ, որ այս տարի աշխարհի բոլոր մանուկներուն իրենց ուզած նուէրները բերես, որպէսզի ոչ մէկը տխրի Նոր Տարուան գիշերը: Ես կը փափաքիմ, որ բոլոր մարդիկ ըլլան առողջ, ուրախ եւ երջանիկ: Իսկ մանուկները պէտք է շատ աւելի լաւ պատրաստեն իրենց դասերը: Ես անհամբեր կը սպասեմ քու գալուստիդ:

Քեզ սիրող թոռնիկդ՝
Յակոբ Պետրոսեան

2. կարգ

Ազգ. Միացեալ Նախակրթարան

Սիրելի՛ Կաղանդ Պապա,
Այնպէս եկո՛ւր, որ հետդ մտքի խաղաղութիւն ու սրտի հանգստութիւն բերես բոլորին: Իսկ աշխարհին՝ խաղաղութիւն, որպէսզի բոլոր մանուկները ինչպէս նաեւ մեր հայրենիքին մէջ ապրող քոյրերն ու եղբայրները ուրախ ապրին:

Քեզ մեծ յոյսով սպասող՝
Միրա Յակոբ

2. կարգ

Ազգ. Միացեալ Նախակրթարան





ԿԿՈՒ

ԲԱՅԱՌԻԿ



Շատ սիրելի՛ եւ կարօտալի՛ Կաղանդ Պապա,
 Ես այնքան կը սիրեմ քեզ եւ կ'ուզեմ որ ժամանակը շուտ անցնի ու տարուան վերջին օրը գայ, որպէսզի դարձեալ տեսնեմ քեզ եւ ուրախանամ քու գալուստովդ, քանի որ անկեղծութեամբ եւ ուրախութեամբ կը լեցնես իմ հոգին: Ինչքա՛ն կ'ուզեմ, որ ամէն օր Դեկտեմբերի վերջին օրը ըլլայ ու անդադար քեզ տեսնեմ: Բոլոր փոքրիկները տարուէ-տարի կը մեծնան ու չափահաս կը դառնան:

Սիրելի՛ Կաղանդ Պապա, իմ բարի մաղթանքները հասցո՛ւր աշխարհի բոլոր մանուկներուն, մխիթարե՛ դժուար օրերու մէջ եղողներուն եւ յոյսի ջահեր վառե՛ անոնց սրտին մէջ, քանի որ մութ գիշերէն ետք պայծառ լոյսը անպայմա՛ն կը ծագի:

Քեզ սիրող եւ քեզմով ուրախացող՝
 Աննա Մարիա Քերքեմէզեան
 2. կարգ
 Ազգ. Միացեալ Նախակրթարան



Սիրելի՛ Կաղանդ Պապա,
 Այս տարի կը խնդրեմ քեզմէ որ օգտակար նուէրներ բերես ինձի, ընկերներու եւ աշխարհի մանուկներուն: Կը մաղթեմ, որ 2024-ը ուրախութեամբ, խաղաղութեամբ, արդարութեամբ եւ առողջութեամբ լեցուն տարի մը ըլլայ բոլոր ժողովուրդին համար:

Քեզ սիրող՝
 Վարդիթեռ Տաղլեան
 2. կարգ
 Ազգ. Միացեալ Նախակրթարան





ԿԿՈՒ

2024



«ԿԿՈՒ» 2024 -ի
բացառիկը պատրաստեց՝
Մարմանդ Աշոտեան-Շահինեան

Նկարագարողեց եւ ձեւաւորեց՝
Ռաֆֆի Քէշիշեան



